ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ

Կ Ա Ր Գ Ա Դ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

2017թ. հունիսի 29 N 136- Ա

ԳԱՅԱՆԵ ԱՂԱԲԱԲՅԱՆԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ <<ԱՇՏԱՐԱԿԻ N 1 ՀԱՏՈՒԿ ԴՊՐՈՑ>> ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԴԻՐ ՏՆՕՐԵՆԻ ՊԱՇՏՈՆՈՒՄ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 109–րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, 111-րդ հոդվածով, 95-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, <<Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի մարտի 4-ի N 319-Ն որոշման պահանջներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի <<Աշտարակի N 1 հատուկ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության գործադիր տնօրենի թափուր պաշտոնի համար 2017 թվականի հունիսի 26-ին անցկացված մրցույթի արդյունքները և Գ. Աղաբաբյանի 2017 թվականի հունիսի 27-ի անձնական դիմումը՝ ***կարգադրում եմ.***

2017 թվականի հունիսի 30-ից Գայանե Ռուբիկի Աղաբաբյանին նշանակել Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի <<Աշտարակի N 1 հատուկ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության գործադիր տնօրենի պաշտոնում նրա հետ կնքելով աշխատանքային պայմանագիր 5 տարի ժամկետով՝ լուծելով 2017 թվականի ապրիլի 13-ին նրա հետ կնքված ժամկետային աշխատանքային պայմանագիրը:

Գ. ԳՅՈՌԱԼՅԱՆ